ԳՐՈՀԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ

Եկեք խոսենք այնպիսի երևույթի մասին, թե ինչպես է պետք իրականացնել գրոհային գործողությունները:

Սկզբից անմիջապես նշենք, որ թյուր ըմբռնում կա առ այն, թե ինչպես են ներկայումս իրականացվում «գրոհները»: Ավանդաբար, ոմանք համեմատում են այն Առաջին համաշխարհային պատերազմում կայզերական բանակի «Sturmtruppen»-ների կամ «գրոհայինների» հետ: Այսինքն՝ լրացուցիչ զրահապաշտպանությամբ և հատուկ զենքով հագեցած զինվորների խմբերի, որոնց նպատակն էր ներխուժել թշնամու խրամուղի և ոչնչացնել այնտեղ գտնվող հետևակիններին ձեռնամարտի բռնվելով կամ ծայրահեղ կարճ հեռավորությունների վրա: Բայց դա այդպես չէ …

Ինչպես ցույց է տալիս ռուս-ուկրաինական հակամարտության փորձը, գրոհային գործողությունները դանդաղ գործընթացներ են: Գործընթացը ոչ թե Zerg rush[1]-ն է վաշտային խմբերի կողմից «ուռա» բղավոցների ներքո, այլ միաժամանակ ականազերծմամբ, հակառակորդի կրակակետերի բացահայտմամբ և դրանց ոչնչացմամբ խելացի առաջխաղացումն է, իսկ հակառակորդի հրետանու կամ ականանետերի հարվածի դեպքում՝ անվերջ ետ քաշվելն է:

Ստորև առաջարկվում է գրոհային գործողություններ իրականացնելու տարբերակներից մեկը:

- Գրոհային խումբը ելման շրջանից առաջանում է դեպի գրոհի ենթակա օբյեկտ հրետանու և ականանետների կրակի պաշտպանության ներքո՝ գործելով մարտական երկյակիների կամ եռյակների կազմում:

[1] **Zerg rush**-ը ռազմական մարտավարություն է, որի ընթացքում հսկայական թվով թույլ պատրաստված և անարժեք զինվորները արագ և վճռականորեն հարձակվում են թշնամու բանակի վրա և ամեն բան ճմլում են իրենց տակ: Քանակն ընդդեմ որակի:



Որտեղ՝ ԳԽ (գրոհային խումբ), ԿԱՋ (կրակային աջակցության ջոկ), ԶՋ (զավթող ջոկ):

- Բոլոր կրակային միջոցների կրակային պաշտպանության ենթախումբն իրականացնում է զավթող ենթախմբի կրակային պաշտպանություն:

- Զավթող ենթախումբը, օգտագործելով հակառակորդի կրակային խոցման արդյունքները, ներխուժում է դիրքեր և ոչնչացնում է հակառակորդին խրամուղիներում ու հաղորդակցության անցատեղերում:

- Գրոհային խմբի հրամանատարը համակարգում է բոլոր ստորաբաժանումների գործողությունները, այդ թվում՝ ԱԹՍ-ի օգնությամբ ուղեկցում և կարգավորում է կրակի կառավարումն ու ընդհանրացնում կրակային խոցման արդյունքները:

- Հանկարծակի հայտնված հակառակորդին բացահայտելու և ճնշելու (ոչնչացնելու) խնդրով կրակային աջակցության ջոկը պետք է գտնվի ճակատի երկայնքում՝ տեղաշարժման հեռավոր տեսանելիության հնարավորությամբ:

- Դիպուկահարները գործում են դիպուկահար զույգերի կազմով՝ հակառակորդին խոցելով նախապես պատրաստված դիրքերից, տեղաշարժվելով որոշակի հեռավորությամբ:

- Գրոհի օբյեկտ մուտք գործելու ընթացքում հակառակորդի կրակային միջոցներն ու անձնակազմի դասավորվածությունը բացահայտելու նպատակով ԱԹՍ-ի օպերատորը իրականացնում է պաշտպանության առաջնագծի դիտազննում:

- Հրաձիգ-սանիտարը գրոհի ընթացքում իրականացնում է մարտադաշտի դիտարկում և հնարավորության դեպքում վիրավորներին տարհանում անվտանգ հեռավորության վրա՝ նրանց ցուցաբերելով առաջին նախաբժշկական օգնություն:

Նյութերը Unfair Advantage կայքից